ՍԴ1/0103/01/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5 դեկտեմբերի 2023 թվական քՍ.Երևան

Ուսումնասիրելով թիվ ՍԴ1/0103/01/23 քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 24-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2023 թվականի հոկտեմբերի 3-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Գուրգեն Մանվելի Զաքարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 525-րդ հոդվածի 5-րդ մասով թիվ 90577323 (ՍԴ1/0103/01/23) քրեական վարույթը:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի հոկտեմբերի 11-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ1/0103/01/23 քրեական վարույթն ստանձնելու և 2023 թվականի հոկտեմբերի 20-ին նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի նոյեմբերի 9-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2023 թվականի նոյեմբերի 24-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ1/0103/01/23 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2023 թվականի նոյեմբերի 30-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. 2023 թվականի սեպտեմբերի 18-ի որոշմամբ Գ.Զաքարյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ *«նա, ՀՀ կառավարության 27.09.2020 թվականի թիվ 1586-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում հայտարարված «Ռազմական դրության» պայմաններում՝ 05.10.2020թ-ին զորահավաքային զորակոչով զորակոչված լինելով ՀՀ զինված ուժեր, ՀՀ ՊՆ 73128 զորամասում ծառայության նշանակվելուց հետո,մարտական կիրառման շրջանից 2020 թվականի հոկտեմբերի 06-ին վերադարձել է զորամասի մշտական տեղակայման վայր, հանձնել իրեն ամրակցված զենք-զինամթերքը, ինքնակամ թողել զորամասը, միայն 2020 թվականի նոյեմբերի 21-ին ներկայացվել է վարույթն իրականացնող մարմին՝ այդ կերպ ծառայությունից բացակայելով մեկ ամսից (240 ժամից) ավելի տևողությամբ»*[1]:

6. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի նոյեմբերի 9-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը, սահմանելով քրեական վարույթի տարածքային ընդդատության հիմնական կանոնները, միաժամանակ,*

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթ 225:

արդարադատության շահերից ելնելով, նախատեսում է նաև դրանից բացառություններ, երբ հնարավոր է լինում փոփոխել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը:

Քրեական վարույթի տարածքային ընդդատության նշված կանոնից օրենսդրի կողմից նախատեսված բացառություն սահմանող Օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ դրա համար անհրաժեշտ են հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայությունը՝

- վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում են տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս,

- տարածքային ընդդատության փոփոխման համաձայնություն են տվել բոլոր մեղադրյալները, ինչը նշանակում է, որ դատարանը չունի հայեցողություն ընդդատությունը փոխելու հարցում և այդ մասին որոշում կայացնում է բացառապես այն դեպքում, երբ առկա է մեղադրյալի համաձայնությունը: Հետևաբար, եթե մեղադրյալը (մեղադրյալները) առարկում է վարույթի տարածքային ընդդատության փոփոխմանը, անկախ նրանից, որ քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերը բնակվում են տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս, վարույթի ընդդատությունը չի կարող փոխվել:

Քրեական վարույթի ուսումնասիրությամբ պարզվում է, որ մեղադրյալը և մեղադրական եզրակացությամբ դատակոչված վկաներից՝ Արտակ Վարդանյանը և Սուրեն Բեբությանը բնակվում են Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքից դուրս, մասնավորապես՝ մեծամասնության բնակության վայրն է հանդիսանում քաղաք Երևանը, հետևաբար Դատարանը գտնում է, որ բավարարված են ՀՀ քրեական դատավարության 261-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու համար սահմանված պահանջները, ինչով էլ պայմանավորված Դատարանը որոշում է մեղադրյալ Գուրգեն Զաքարյանի միջնորդությունը բավարարել, քրեական վարույթի տարածքային ընդդատությունը

փոխել և այն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան: (…)»[2]:

7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2023 թվականի նոյեմբերի 24-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) Սույն քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.*

- Մեղադրյալ Գուրգեն Զաքարյանը 2023 թվականի նոյեմբերի 9-ին կայացած նախնական դատաքննության ժամանակ միջնորդել է քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոփոխել և քրեական վարույթն ուղարկել իր բնակության վայրին հնարավորին մոտ դատարան՝ հայտնելով, որ ինքը հաշվառված և բնակվում է դատարանի սպասարկման տարածքից դուրս՝ ՀՀ Արարատի մարզի Այնթապ բնակավայրում: Հանրային մեղադրող Հ.Ալեքսանյանը միջնորդության դեմ չի առարկել:

- Համաձայն մեղադրական եզրակացությանը կից դատակոչի ենթակա անձանց ցուցակի՝ մեղադրյալ Գուրգեն Զաքարյանը բնակվում է Արարատի մարզի Այնթապ գյուղում, վկաներ Արտակ Վարդանյանը, Սուրեն Բեբությանը՝ Երևան քաղաքում, իսկ վկա Արտոս Սաֆարյանը՝ Սյունիքի մարզի Կապան քաղաքում:

(…)

Դատարանի դիտարկմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառումը պետք է կրի բացառիկ բնույթ, այսինքն՝ նշված նորմի կիրառմամբ քրեական գործի տարածքային ընդդատության փոփոխությունը պետք է կատարվի այնպիսի ծանրակշիռ փաստարկների հաշվառմամբ, որը կհանգեցնի հիմնական կանոնից շեղման բացառիկության: Այլ կերպ, նշված նորմին չպետք է տրվի անչափ ձևական նշանակություն, այն չպետք է ենթարկվի լայն մեկնաբանության, ուստի վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնություն ասելով չպետք է դիտարկվի ցանկացած քանակական գերակշռում, հակառակ պարագայում կստեղծվի այնպիսի իրավիճակ, որ ցանկացած գործով վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների բնակության վայրերի տեխնիկական հաշվառմամբ հնարավոր կլինի քրեական վարույթները փոխանցել տարածքային ընդդատությամբ: Նշված նորմը կիրառելիս Դատարանն

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 307-309:

առաջնահերթ պետք է հետապնդի գործի ողջամիտ ժամկետում քննությունն ապահովելու, կողմի՝ դատարանի առջև կանգնելու և լսված լինելու իրավունքի անխոչընդոտ իրացումն ապահովելու նպատակ: Այլ կերպ՝ նշված նորմը կիրառելիս նախևառաջ պետք է հաշվի առնել դատարանի մատչելիության իրավունքի անխոչընդոտ իրացումը:

Այս պարագայում Դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշմանը, քանի որ քրեական գործի ուսումնասիրությունը վկայում է, որ գործով միայն երկու վկա է բնակվում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում, վկաներից մեկը բնակվում է Սյունիքի մարզում, իսկ մեղադրյալը՝ Արարատի մարզում: Տվյալ պարագայում Դատարանի համար անհասկանալի է, թե ինչ հանգամանքների հիման վրա է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը հանգել այն եզրակացության, որ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը պետք է փոխել և այն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան, երբ ուղղակի հաշվարկի արդյունքում անգամ չի ստացվում, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում:

Այնուամենայնիվ, Դատարանը գտնում է, որ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը, եթե անգամ հաշվարկի արդյունքում գտել է, որ վկաների մեծամասնությունը (մեկ վկայի տարբերությամբ) բնակվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասը կիրառել է չափազանց ձևականացված, որպիսի մոտեցումը չի բխում արդարադատության շահից: (…)»[3]*:*

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 315-321:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՍԴ1/0103/01/23 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին որոշումը:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[4]:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «*Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը»*:

13. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Մեղադրյալ Գ.Զաքարյանը նախնական դատալսումների ժամանակ միջնորդել է քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխել և վարույթն ուղարկել իր բնակության վայրին մոտ դատարան[5]:

- Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ մեղադրյալը և մեղադրական եզրակացությամբ դատակոչված վկաներից՝ Ա.Վարդանյանը և Ս.Բեբությանը բնակվում են Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքից դուրս, որոշում է կայացրել վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական

---

[4] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

[5] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, դատական նիստի արձանագրություն, թերթ 306:

դատարան ուղարկելու մասին այն հիմնավորմամբ, որ մեծամասնության բնակության վայրը Երևան քաղաքն է[6]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը չի բնակվում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում, գտել է, որ վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու հիմքն առկա չէ[7]:

14. Սույն վարույթի փաստական հանգամանքները գնահատելով վերոշարադրյալ իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է արձանագրել, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քրեական վարույթի տարածքային ընդդատությունը մեղադրյալի միջնորդությամբ փոխելիս և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելիս չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը որպես վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու պարտադիր պայման է նախատեսում ոչ թե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության **տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս,** այլ **առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում** բնակվելը: Մինչդեռ սույն քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրյալ Գ.Զաքարյանի հաշվառման և բնակության վայր նշված է Արարատի մարզը, վկա Ա.Սաֆարյանի հաշվառման և բնակության վայր՝ Սյունիքի մարզը, վկաներ Ա.Վարդանյանի և Ս.Բեբությանի հաշվառման հասցեն թեև նշված է Երևան քաղաքը[8], սակայն, ըստ նյութերի, վերջիններս զինվորական ծառայություն են իրականացնում Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում[9]: Հետևաբար, սույն վարույթով չի հաստատվում, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների

---

[6] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[7] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[8] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթ 276:
[9] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 205-217:

մեծամասնությունը բնակվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում: Նման պայմաններում գտնում եմ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու օրենսդրական հիմքը բացակայում է:

14. Միաժամանակ, հարկ է նշել, որ եթե նույնիսկ ընդունելի համարվի վկաներ Ա.Վարդանյանի և Ս.Բեբությանի բնակության վայրի վերաբերյալ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունը, այնուամենայնիվ վկաներից միայն երկուսի՝ Երևան քաղաքում բնակվելու հանգամանքը, չի կարող վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու հիմք հանդիսանալ, քանի որ վերջիններս **վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնություն** չեն կազմում:

15. Ամփոփելով՝ գտնում եմ, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՍԴ1/0103/01/23 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին որոշումը հիմնավոր չէ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ ՍԴ1/0103/01/23 քրեական վարույթն ուղարկել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ